

1.4.2. Բնակչության դրամական եկամուտներ և ծախսեր, աշխատավարձ և այլ եկամուտներ

Բնակչության դրամական եկամուտների և ծախսերի հաշվեկշիռը: Բնակչության դրամական եկամուտները 2003թ. հունվար-մայիսին կազմել են 367626.3 մլն.դրամ, իսկ դրամական ծախսերը 379264.3 մլն.դրամ: Դրանց աճի տեմպերը 2002թ. հունվար մայիսի համեմատ համապատասխանաբար կազմել են 112.0% և 113.8 %:


Բնակչության իրական տնօրինվող դրամական եկամուտները: Բնակչության իրական տնօրինվող դրամական եկամուտները (եկամուտները՝ հանած պարտադիր վճարումները, հաշվի առած սպառողական գների ինդեքսների փոփոխությունները) 2003թ. հունվար մայիսին 2002թ. հունվար- մայիսի նկատմամբ աճել են 7.7%-ով:

Բնակչության դրամական եկամուտների օգտագործման կառուցվածքը

(%)

	Տեսակարար կշիռը եկամուտներում		2003թ. հունվար-մայիսի աճի տեմպը 2002թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ	տեսակարար կշռի տոկոսային փոփոխություն
	2002 հունվար-մայիս	2003 հունվար-մայիս		
Դրամական եկամուտներ որից օգտագործվել է	100	100	112.0	-
ապրանքների գնման և ծառայությունների վճարման համար	76.3	78.3	114.8	2.0
պարտադիր վճարումների և կամավոր մուծումների համար	4.1	5.0	135.5	0.9
ավանդների հավելած	0.0	0.2	-	-
արտարժույթի գնում	15.0	13.7	102.5	-1.3
այլ ծախսեր	6.1	6.0	110.5	-0.1
Դրամական ծախսեր	101.5	103.2	113.8	1.7
եկամուտների գերազանցում ծախսերի նկատմամբ	-1.5	-3.2	-30.1	-1.7

Բնակչության դրամական ծախսերի կառուցվածքը



Աշխատանքի վարձատրություն: 2003թ. հունվար-մայիսին, ըստ յուրաքանչյուր ամիս վիճակագրական հաշվետվություն ներկայացնող մոտ 9000 կազմակերպությունների հաշվետվությունների նախնական տվյալների գնահատման, զբաղվածների միջին անվանական աշխատավարձը կազմել է 29017 դրամ և 2002թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ ավելացել 17.0%-ով: Բյուջետային կազմակերպություններում զբաղվածների աշխատավարձը, որի գնահատումը կատարվել է մոտ 4000 բյուջետային կազմակերպություններից ստացվող եռամսյակային հաշվետվությունների տվյալների հիման վրա, կազմել է 17398 դրամ և 2002թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավելացել է 12.8%-ով, իսկ ոչ բյուջետային կազմակերպություններում զբաղվածներինը՝ համապատասխանաբար 39587դրամ և աճել՝ 18.8%-ով:

Անվանական միջին աշխատավարձի փոփոխությունը նախորդ տարվա նկատմամբ և տատանումն ըստ տնտեսության ճյուղերի 2003թ. ապրիլին

	Անվանական միջին աշխատավարձը, դրամ		Ընդամենի նկատմամբ, %		Նախորդ տարվա նկատմամբ, %	
	ապրիլ	հունվար-ապրիլ	ապրիլ	հունվար-ապրիլ	ապրիլ	հունվար-ապրիլ
Ընդամենը	29758	28742	100.0	100.0	120.4	117.0
Արդյունաբերություն	51944	50556	174.6	175.9	137.7	135.8
Գյուղատնտեսություն	22644	23522	76.1	81.8	123.5	128.1
Անտառտնտեսություն	9557	12823	32.1	44.6	82.5	136.5
Տրանսպորտ	48702	47280	163.7	164.5	114.2	112.1
Կապ	53791	52440	180.8	182.5	104.8	104.0
Շինարարություն	45898	43686	154.2	152.0	98.3	109.8
Առևտուր, հանրային սնունդ	16832	17634	56.6	61.4	94.2	95.3
Բնակարանային-կոմունալ տնտեսություն, կենցաղսպասարկում	39906	39329	134.1	136.8	129.5	132.1
Առողջապահություն, ֆիզկուլտուրա և սոցիալական ապահովություն	13368	13226	44.9	46.0	105.7	104.5
Կրթություն	16946	15918	56.9	55.4	122.2	117.4
Մշակույթ	13187	12824	44.3	44.6	120.1	120.0
Արվեստ	13093	12925	44.0	45.0	110.4	106.7
Գիտություն և գիտական սպասարկում	21372	21012	71.8	73.1	104.3	103.1
Վարկավորում և ապահովագրություն	90185	83383	303.1	290.1	121.2	89.1
Կառավարման ապարատ	42611	42559	143.2	148.1	112.4	115.9
Այլ	27313	26544	91.8	92.4	110.1	110.7

2003թ. ապրիլին սոցիալական ոլորտի ճյուղերում զբաղվածների միջին աշխատավարձը տատանվել է ընդհանուր միջինի 44.0%-ից (արվեստ) մինչև 56.9%-ի (կրթություն) սահմաններում: Վարկավորման համակարգում անվանական միջին աշխատավարձն ընդհանուր միջինին գերազանցել է 3.0 անգամ, կապի համակարգում և արդյունաբերության մեջ՝ 1.7, տրանսպորտում՝ 1.6, շինարարության մեջ՝ 1.5, կառավարման համակարգում՝ 1.4, և բնակարանային-կոմունալ և բնակչության կենցաղսպասարկման ոլորտում՝ 1.1 անգամ:

2003թ. ապրիլի վերջի դրությամբ, վերոնշյալ կազմակերպություններում աշխատավարձի ժամկետանց պարտքը (փոխանցված նախորդ տարվանից (ամսից)) կազմել է 17007035.2 հազ. դրամ, այդ թվում՝ հաշվետու ամսում՝ 4648322.5 հազ. դրամ: Վերջինս նախորդ ամսվա համեմատությամբ նվազել է 3.8%-ով և աճել՝ 27.4%-ով 2002թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ: Աշխատավարձի ժամկետանց պարտքի ցուցանիշը շարունակում է բարձր մնալ արդյունաբերության ճյուղում՝ 45.6%, կրթության ոլորտում՝ 12.4%, շինարարությունում՝ 12.0% և կառավարման ապարատում՝ 8.6%: